ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
**ՊԱՏԳԱՄԱՎՈՐ**

«10» հուլիսի 2023 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**
**ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգարժա՛ն պարոն Սիմոնյան,

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածի 1-ին մասով, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 65-րդ հոդվածի 1-ին մասով և 67-րդ հոդվածով՝ օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ է ներկայացվում ««Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը:

ՀՀ Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն՝ սույն գրությանը կցվում են՝

1. օրենքի նախագիծը (հիմնական զեկուցող՝ Արմեն Խաչատրյան)
2. օրենքի նախագծի ընդունման հիմնավորումը
3. տեղեկանքը փոփոխվող հոդվածների և լրացումների վերաբերյալ:

Խնդրում ենք օրենքի ներկայացված նախագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

Առդիր՝ 18 թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՔՈՉԱՐՅԱՆ

ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

## «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Ազգային ժողովի կանոնակարգ» 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-9-Ն սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 21-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 1-ին կետը «ու պաշտոնատար անձանց» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկությունների տիրապետող նախկին իրավասու պաշտոնատար անձանց» բառերով.

2) 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) որոշմամբ հանձնաժողովի համապատասխան նիստին հրավիրել իրավասու պաշտոնատար անձանց, ինչպես նաև հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկությունների տիրապետող նախկին իրավասու պաշտոնատար անձանց:»:

**Հոդված 2.** Օրենքի 22-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հոդված 22. Քննիչ հանձնաժողով հրավիրված կամ քննիչ հանձնաժողովի հարցման ենթարկված անձանց իրավունքները և պարտականությունները**

1. Քննիչ հանձնաժողով հրավիրված **կամ քննիչ հանձնաժողովի հարցման ենթարկված** իրավասու պաշտոնատար անձինք և հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկությունների տիրապետող նախկին իրավասու պաշտոնատար անձինք իրավունք ունեն՝

1) ծանոթանալու իրենց մասնակցությամբ տեղի ունեցած հանձնաժողովի նիստերի արձանագրություններին, ինչպես նաև ներկայացնելու դրանցում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու առաջարկ.

2) հանձնաժողովի ուսումնասիրությանը ներկայացնելու հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ նյութեր (փաստաթղթեր).

3) պարզաբանումներ տալու հանձնաժողովի զեկույցի վերաբերյալ, ինչպես նաև հիմնավորելու իրենց դիրքորոշումներն ամբողջությամբ:

2. Քննիչ հանձնաժողով հրավիրված **կամ քննիչ հանձնաժողովի հարցման ենթարկված** իրավասու պաշտոնատար անձինք և հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկությունների տիրապետող նախկին իրավասու պաշտոնատար անձինք պարտավոր են՝

1) քննիչ հանձնաժողովի հրավերով ներկայանալ հանձնաժողովի համապատասխան նիստին և այդ նիստի ընթացքում հանձնաժողովի ներկայացրած պահանջով հանձնաժողովին տրամադրել վերջինիս իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկություններ (պատասխանել հանձնաժողովի անդամների հարցերին), եթե դրանց տրամադրումն օրենքով արգելված չէ.

2) հանձնաժողովի նիստերից դուրս հանձնաժողովի ներկայացրած առանձին գրավոր դիմումով (պահանջով) հանձնաժողովին տրամադրել վերջինիս իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկություններ (պատասխանել հանձնաժողովի անդամների հարցերին), եթե դրանց տրամադրումն օրենքով արգելված չէ.

3) հանձնաժողովին գրավոր կամ բանավոր տեղեկացնել հանձնաժողովի համապատասխան նիստին չներկայանալու կամ հանձնաժողովին՝ վերջինիս իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկություններ չտրամադրելու (հանձնաժողովի անդամների հարցերին չպատասխանելու) հարգելի պատճառների (անհնարինության) ու դրանց հիմնավորումների մասին:

3. Իրավասու պաշտոնատար անձինք և հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկությունների տիրապետող նախկին իրավասու պաշտոնատար անձինք հանձնաժողովի համապատասխան նիստին հրավիրվում են ծանուցագրով: Հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկությունների տիրապետող նախկին իրավասու պաշտոնատար անձին ծանուցագիրը հանձնվում է պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ ոստիկանության միջոցով: Ծանուցագիրը պարունակում է նշումներ՝ հանձնաժողովի համապատասխան նիստին ներկայանալու օրվա, ժամի և վայրի, հանձնաժողովի նիստին հրավիրվող անձի՝ սույն օրենքով սահմանված իրավունքների և պարտականությունների, ինչպես նաև հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկություններ տրամադրելու (հանձնաժողովի անդամների հարցերին պատասխանելու) համար երկու անգամ անհարգելի պատճառով հանձնաժողովի համապատասխան նիստերին չներկայանալու կամ հանձնաժողովի երկու տարբեր նիստերի ընթացքում հանձնաժողովի ներկայացրած պահանջներով կամ հանձնաժողովի նիստերից դուրս հանձնաժողովի ներկայացրած երկու առանձին գրավոր դիմումներով (պահանջներով) հանձնաժողովին՝ վերջինիս իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկություններ տրամադրելուց (հանձնաժողովի անդամների հարցերին պատասխանելուց) ապօրինի հրաժարվելու համար օրենքով սահմանված քրեական պատասխանատվության մասին: Ծանուցագիրը պետք է պարունակի քննիչ հանձնաժողովի հեռախոսահամարները և էլեկտրոնային փոստի հասցեն:»:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## ««ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**1. Առկա (ընթացիկ) իրավիճակը և իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը.**

ՀՀ Սահմանադրության 108-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի պահանջով, Ազգային ժողովի իրավասության մեջ մտնող և հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերին վերաբերող փաստերը պարզելու և դրանք Ազգային ժողով ներկայացնելու նպատակով, իրավունքի ուժով ստեղծվում է Ազգային ժողովի քննիչ հանձնաժողով:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն քննիչ հանձնաժողովի անդամների առնվազն մեկ քառորդի պահանջով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են հանձնաժողովին տրամադրել հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկություններ, եթե դրանց տրամադրումն օրենքով արգելված չէ:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն քննիչ հանձնաժողովի գործունեության մանրամասները սահմանվում են Ազգային ժողովի կանոնակարգով:

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի **(այսուհետ՝ Օրենք)** 21-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված են քննիչ հանձնաժողովի լիազորությունները, որոնց շարքում նաև՝ իրավասու պաշտոնատար անձանց, ինչպես նաև հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող տեղեկություններ ներկայացրած անձանց հանձնաժողով հրավիրելու լիազորությունը (Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ):

Օրենքի 22-րդ հոդվածի համաձայն քննիչ հանձնաժողով հրավիրված պաշտոնատար անձինք **պարտավոր են,** իսկ հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող տեղեկություններ ներկայացրած այլ անձինք **իրավունք ունեն** ներկայանալու և բացատրություններ տալու հանձնաժողովի նիստում, ինչպես նաև պատասխանելու հանձնաժողովի անդամների հարցերին:

Ակնհայտ է, որ կոնկրետ դեպքերում Օրենքի գործող իրավակարգավորումները քննիչ հանձնաժողովի աշխատանքի բնականոնությունը պայմանավորում են հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող տեղեկություններ ներկայացրած այլ անձանց կամքով՝ նրանց ընձեռելով հանձնաժողովի կանչով չներկայանալու կամ ներկայանալուց հետո բացատրություններ չտալու ազատություն:

Ուստի և, գործող իրավակարգավորումներով հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող տեղեկություններ ներկայացրած այլ անձանց քննիչ հանձնաժողովի համապատասխան նիստին հրավիրելու և նույն անձանցից հանձնաժողովի համապատասխան նիստի ընթացքում հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկություններ ստանալու (հանձնաժողովի անդամների հարցերին պատասխանելու) վերաբերյալ Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետից և 22-րդ հոդվածի 1-ին մասից հետևող **քննիչ հանձնաժողովի սուբյեկտիվ իրավունքները երաշխավորված չեն՝** նույն իրավունքներին համապատասխանող հանձնաժողովի համապատասխան նիստին հրավիրվող վերոնշյալ անձանց **համարժեք պարտականություններով:** Ընդ որում, գործող իրավակարգավորումներով **նշված անձանց համար իրավաբանական պարտականություններ ընդհանրապես նախատեսված չեն:** Հետևաբար, մի կողմից քննիչ հանձնաժողովի, մյուս կողմից քննիչ հանձնաժողովի համապատասխան նիստին հրավիրվող հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող տեղեկություններ ներկայացրած այլ անձանց միջև **իրական (ռեալ) իրավահարաբերություններ չեն կարող ծագել:**

Նույն կերպ, գործող իրավակարգավորումներով **երաշխավորված չէ նաև** գործող իրավասու պաշտոնատար անձանց կողմից հանձնաժողովի նիստերից դուրս հանձնաժողովի կողմից ներկայացված առանձին գրավոր դիմումով (պահանջով) հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկություններ ստանալու վերաբերյալ Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված **քննիչ հանձնաժողովի սուբյեկտիվ իրավունքը**, քանզի այդ իրավունքին ենթադրյալ համապատասխանող հիշյալ իրավասու պաշտոնատար անձանց սպառիչ պարտականությունները սահմանող գործող իրավակարգավորմամբ (մասնավորապես՝ Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասով) հանձնաժողովին՝ վերջինիս իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկությունները բացատրություններ տալու միջոցով տրամադրելու ու դրա շրջանակներում հանձնաժողովի անդամների հարցերին պատասխանելու **գործող իրավասու պաշտոնատար անձանց պարտականության**, ինչպես նաև **հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող տեղեկություններ ներկայացրած անձանց նույնաբովանդակ իրավունքի իրացումը (կենսագործումը)** հնարավոր է համարվում **քննիչ հանձնաժողովի համապատասխան նիստին այդ անձանց հրավիրված լինելու և այդ նիստին նրանց ունեցած մասնակցության հանգամանքով:**

Ընդ որում, եթե գործող իրավակարգավորումներով (հանձինս Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի) քննիչ հանձնաժողովին այնուհանդերձ վերապահված է գործող իրավասու պաշտոնատար անձանցից հանձնաժողովի նիստերից դուրս հանձնաժողովի կողմից ներկայացված առանձին գրավոր դիմումով (պահանջով) հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկություններ ստանալու **սուբյեկտիվ իրավունք**, ապա նույնպիսի իրավունք **քննիչ հանձնաժողովին վերապահված չէ** հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող տեղեկություններ ներկայացրած այլ անձանց մասով:

**Այս իրավիճակը նորմալ չէ՝** ինչպես համապատասխան իրավահարաբերությունների պատշաճ նորմատիվ կարգավորման, այնպես էլ քննիչ

հանձնաժողովի աշխատանքների բնականոնության ապահովումն օրենքով երաշխավորված լինելու անհրաժեշտության տեսանկյունից:

Նման առկա (ընթացիկ) իրավիճակը հրամայական **անհրաժեշտություն է առաջացնում** Օրենքում և ՀՀ քրեական օրենսգրքում կատարելու քննարկվող՝ ««Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերով **(այսուհետ՝ համապատասխան նախագիծ, կամ՝ Նախագծեր)** առաջարկվող համապատասխան փոփոխություններն ու լրացումները:

**2. Առաջարկվող կարգավորման բնույթը (նորմատիվ հիմնավորվածությունը).**

Ակնհայտ է, որ իրավասու պաշտոնատար անձանց և հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող տեղեկություններ ներկայացրած անձանց քննիչ հանձնաժողովի համապատասխան նիստին հրավիրելու և այդ անձանց կողմից հանձնաժողովի այդ նիստի ընթացքում հանձնաժողովի ներկայացրած պահանջով նույն հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկություններ ստանալու (հանձնաժողովի անդամների հարցերին պատասխանելու), ինչպես նաև նույն անձանց կողմից հանձնաժողովի նիստերից դուրս հանձնաժողովի ներկայացրած առանձին գրավոր դիմումով (պահանջով) հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկություններ (հանձնաժողովի անդամների հարցերի պատասխանները) ստանալու հանձնաժողովի **սուբյեկտիվ իրավունքները** կարող են համապատասխանաբար՝ **իրացվել (կենսագործվել) ու սահմանվել, եթե դրանց համապատասխանեն վերոնշյալ անձանց համարժեք իրավաբանական պարտականությունները:**

Ուստի և, համապատասխան նախագծով նախատեսվող Օրենքի 21-րդ հոդվածով առաջարկվող համապատասխան փոփոխությամբ ու լրացմամբ **հստակեցվում, իրատեսական** և ՀՀ Սահմանադրության 108-րդ հոդվածում նշված համապատասխան անձանց շրջանակի հետ **համահունչ ու իրավաչափ է դարձվում այն անձանց շրջանակը,** ովքեր կարող են հրավիրվել հանձնաժողովի

համապատասխան նիստին՝ նույն հանձնաժողովին՝ վերջինիս իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկություններ տրամադրելու համար, ինչպես նաև տիրապետելով այդ տեղեկություններին, դրանք պարտավոր են տրամադրելու քննիչ հանձնաժողովին՝ վերջինիս գրավոր դիմումով (պահանջով): Նախագծի համաձայն, այդ անձինք են հանդիսանում՝ ինչպես գործող իրավասու պաշտոնատար անձինք, այնպես էլ՝ այն նախկին իրավասու պաշտոնատար անձինք, ովքեր տիրապետում են հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկությունների **(այսուհետ՝ համապատասխան անձինք):** Մինչդեռ, գործող իրավակարգավորման համաձայն, գործող պաշտոնատար անձանցից բացի, հանձնաժողով կարող են հրավիրվել միայն այն անձինք, ովքեր ինչ-որ տեղեկություններ են ներկայացրել հանձնաժողովին, **ինչը նախ՝ հստակեցված չէ ու գործնականում այնքան էլ իրատեսական չէ,** և բացի այդ, նշված իրավակարգավորումն **իրավաչափության առումով խնդիրներ կարող է առաջացնել ՀՀ Սահմանադրության 108-րդ հոդվածում նշված համապատասխան անձանց շրջանակի հետ:** Նույն նկատառումներից ելնելով, համապատասխան նախագծով նախատեսվող Օրենքի 22-րդ հոդվածի համապատասխան փոփոխությամբ առաջարկվում է հրաժարվել անիրատեսական և գործնականում անիրագործելի (անիրականանալի) թվացող Օրենքի 22-րդ հոդվածի 1.1-րդ մասով սահմանված ձևակերպումից, որից հետևում է, որ պաշտոնատար անձանց հանձնաժողով ներկայանալու և բացատրություններ տալու, ինչպես նաև հանձնաժողովի անդամների հարցերին պատասխանելու պարտականությունը պահպանվում է նաև նրանց պաշտոնից ազատվելուց հետո, **եթե տեղեկատվության տրամադրման պահանջը կամ նիստին ներկայանալու և բացատրություններ տալու հրավերն ստացվել է մինչև պաշտոնից ազատվելը:** Օրենքով սահմանված հիշյալ կատեգորիայի անձանց փոխարեն համապատասխան նախագծով առաջարկվում է հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկությունները բացատրություններ տալու միջոցով հանձնաժողովին տրամադրելու ու դրա շրջանակներում հանձնաժողովի անդամների հարցերին պատասխանելու պարտականությունն՝ առանց որևէ (այդ ծվում՝ առանց

տեղեկատվության տրամադրման պահանջը կամ նիստին ներկայանալու և բացատրություններ տալու հրավերը մինչև պաշտոնից ազատվելը ստացված լինելու) պայմանի, նախատեսել **բոլոր նախկին, սակայն միայն իրավասու** պաշտոնատար անձանց համար, որպիսի լուծումը նույնպես, քննիչ հանձնաժողովների հեղինակությունը, դրա գործունեության բնականոնությունը, երաշխավորվածությունը, արդյունավետությունն ու նպատակայնությունն ապահովող միջոց է:

Համապատասխան նախագծով նախատեսվող Օրենքի 22-րդ հոդվածի համապատասխան փոփոխությամբ առաջարկվում է սահմանել համապատասխան անձանց սուբյեկտիվ իրավունքների և իրավաբանական պարտականությունների հստակ շրջանակը, որպիսիք համահունչ են դարձվում և հավասարակշռվում են քննիչ հանձնաժողովի՝ ՀՀ Սահմանադրության 108-րդ հոդվածով սահմանված ու երաշխավորված՝ նույն հանձնաժողովի համապատասխան իրավասության շրջանակի հետ, համաձայն որի՝ քննիչ հանձնաժողովի անդամների առնվազն մեկ քառորդի պահանջով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են հանձնաժողովին տրամադրել հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկություններ, եթե դրանց տրամադրումն օրենքով արգելված չէ, ինչպես նաև վերջինիս գործնականում իրացումն (կենսագործումն) ապահովող՝ համապատասխան անձանց հանձնաժողովի համապատասխան նիստին հրավիրելու և (կամ) հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկություններ տրամադրելու վերաբերյալ համապատասխան նախագծով առաջարկվող լուծման հետ:

Բացի այդ, համապատասխան նախագծով նախատեսվող Օրենքի 22-րդ հոդվածի համապատասխան փոփոխությամբ առաջարկվում է սահմանել համապատասխան անձանց քննիչ հանձնաժողովի համապատասխան նիստին ծանուցագրով հրավիրելու կարգը: Նրանցից հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկությունների տիրապետող նախկին իրավասու պաշտոնատար անձանց ծանուցագիրը հանձնվելու է պատվիրված

նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ ոստիկանության միջոցով, **ինչը կբարձրացնի հանձնաժողովի աշխատանքների օպերատիվությունն ու երաշխավորվածությունը:** Ընդ որում, ծանուցագրում, ի թիվս այլ տեղեկությունների, նշվելու են նաև հանձնաժողովի համապատասխան նիստին համապատասխան անձի ներկայանալու օրվա, ժամի և վայրի, հանձնաժողովի նիստին հրավիրվող անձի՝ Օրենքով սահմանված իրավունքների, պարտականությունների և վերջիններիս չկատարման համար նախատեսված հնարավոր քրեական պատասխանատվության մասին:

Քննիչ հանձնաժողովների գործունեությունը, համապատասխան պաշտոնատար անձանց նկատմամբ իմփիչմենտի ընթացակարգը, համաներման իրավունքի իրացումը (կենսագործումը) կազմում են ժողովրդավարական պառլամենտների (պարլամենտարիզմի), այսպես կոչված՝ «դատական իրավասությունների» շրջանակը: Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական սկզբունքի, ինչպես նաև դրա վրա խարսխված խորհրդարանական հանրապետության պետական կառավարման ու դրանից ածանցված պառլամենտարիզմի ինստիտուտի տեսանկյունից այդ լիազորություններն ընդգրկվում են օրենսդիր իշխանության մարմնի տնօրինման տիրույթում և որակական ազդեցություն են թողնում կամ կարող են թողնել՝ **պետության սահմանադրական կարգի հիմունքների պաշտպանության գործառույթի վրա,** որի խաթարման ցանկացած դրսևորում, հենց միայն ինքն իրենով վերցրած, արդեն իսկ հասարակական մեծ վտանգավորություն է ներկայացնում՝ հատկապես, եթե հաշվի առնվի համապատասխան գործընթացին մասնակցող հատուկ սուբյեկտների ու նրանց տիրապետության ներքո գտնվող տեղեկությունների կարևորությունը, ինչպես նաև այդ տեղեկությունները համապատասխան իրավասու պետական կառույցների, ըստ վերջիններիս օրինական գործունեության հետ կապված անհրաժեշտության, չտրամադրվելու անցանկալի հետևանքները: Ուստի և, նշվածով նույնպես պայմանավորված՝ առաջարկվում ՀՀ քրեական օրենսգրքում կատարել համապատասխան լրացում և դրանով **քրեական պատժելիություն սահմանել՝** իրավասու պաշտոնատար անձի

կամ քննիչ հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկությունների տիրապետող նախկին իրավասու պաշտոնատար անձի կողմից քննիչ հանձնաժողովի հրավերով հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկություններ տրամադրելու (հանձնաժողովի անդամների հարցերին պատասխանելու) համար երկու անգամ անհարգելի պատճառով հանձնաժողովի համապատասխան նիստերին չներկայանալու կամ նրանց կողմից՝ քննիչ հանձնաժողովի երկու տարբեր նիստերի ընթացքում հանձնաժողովի ներկայացրած պահանջներով կամ քննիչ հանձնաժողովի նիստերից դուրս հանձնաժողովի ներկայացրած երկու առանձին գրավոր դիմումներով (պահանջներով) հանձնաժողովին՝ վերջինիս իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկություններ տրամադրելուց (հանձնաժողովի անդամների հարցերին պատասխանելուց) ապօրինի հրաժարվելու համար:

**3. Ակնկալվող արդյունքը.**

Նախագծերի ընդունմամբ կբարձրանա Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովների հեղինակությունը, կապահովվի դրանց գործունեության բնականոնությունը, երաշխավորվածությունը, արդյունավետությունն ու նպատակայնությունը, համապատասխան նախագծով համապատասխան անձանց համար առաջարկվող իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ կարգավորումները կհամապատասխանեցվեն ու կհավասարակշռվեն՝ ինչպես միմյանց, այնպես էլ՝ քննիչ հանձնաժողովի հստակեցվող համապատասխան իրավունքներին ու պարտականություններին, ինչի շնորհիվ համապատասխան անձանց ու քննիչ հանձնաժողովի միջև կձևավորվեն իրական (ռեալ) հավասարակշռված իրավահարաբերություններ, դրանք կստանան համապատասխան պետական ապահովվածություն ու երաշխավորվածություն՝ դրանց խախտումներից պաշտպանվելով քրեաիրավական ներգործության միջոցներով:

**4. Նախագծերի ընդունմամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու անհրաժեշտությունը.**

Նախագծերի ընդունմամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանա:

**5. Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտներն ու անձինք.**

Նախագծերը մշակվել ու նախապատրաստվել են պատգամավորական օրենսդրական նախաձեռնության կարգով՝ ՀՀ ԱԺ պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի անդամ- պատգամավորներ՝ Անդրանիկ Քոչարյանի, Արմեն Խաչատրյանի, Գուրգեն Մելքոնյանի, Վահագն Ալեքսանյանի, Հայկ Սարգսյանի նախաձեռնությամբ և նույն հանձնաժողովի փորձագիտական խմբի մասնակցությամբ:

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

***Հոդված 21. Քննիչ հանձնաժողովի գործունեությունը***

1. Քննիչ հանձնաժողովը կարող է իր՝

1) անդամների առնվազն մեկ քառորդի նախաձեռնությամբ՝ առանց որոշման, գրավոր դիմել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ ու պաշտոնատար անձանց՝ , ինչպես նաև հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկությունների տիրապետող նախկին իրավասու պաշտոնատար անձանց՝ պահանջելով իր իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկություններ.

3) ~~որոշմամբ հանձնաժողով հրավիրել իրավասու պաշտոնատար անձանց, ինչպես նաև այն անձանց, որոնք ներկայացրել են հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող տեղեկություններ:~~

3) որոշմամբ հանձնաժողովի համապատասխան նիստին հրավիրել իրավասու պաշտոնատար անձանց, ինչպես նաև հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկությունների տիրապետող նախկին իրավասու պաշտոնատար անձանց:»:

~~***Հոդված 22. Քննիչ հանձնաժողով հրավիրված անձանց իրավունքները և պարտականությունները***~~

~~1. Քննիչ հանձնաժողով հրավիրված պաշտոնատար անձինք պարտավոր են, իսկ հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող տեղեկություններ ներկայացրած այլ անձինք իրավունք ունեն ներկայանալու և բացատրություններ տալու հանձնաժողովի նիստում, ինչպես նաև պատասխանելու հանձնաժողովի անդամների հարցերին:~~

~~1.1. Սույն հոդվածի 1-ին մասում նշված պաշտոնատար անձանց՝ հանձնաժողով ներկայանալու և բացատրություններ տալու, ինչպես նաև հանձնաժողովի անդամների հարցերին պատասխանելու պարտականությունը պահպանվում է նաև նրանց պաշտոնից ազատվելուց հետո, եթե տեղեկատվության տրամադրման պահանջը կամ նիստին ներկայանալու և բացատրություններ տալու հրավերն ստացվել է մինչև պաշտոնից ազատվելը:~~ **~~(լր. 02.10.2018 ՀՕ-17-Ն)~~**

~~2. Սույն հոդվածի 1-ին և 1.1-ին մասերում նշված անձն իրավունք ունի՝~~ **~~(փոփ. 02.10.2018 ՀՕ-17-Ն)~~**

~~1) ծանոթանալու իր մասնակցությամբ հանձնաժողովի նիստերի արձանագրություններին, ինչպես նաև ներկայացնելու դրանցում փոփոխություններ կատարելու պահանջ.~~

~~2) պարզաբանումներ տալու հանձնաժողովի զեկույցի վերաբերյալ, ինչպես նաև հիմնավորելու իր դիրքորոշումն ամբողջությամբ:~~

**Հոդված 22. Քննիչ հանձնաժողով հրավիրված կամ քննիչ հանձնաժողովի հարցման ենթարկված անձանց իրավունքները և պարտականությունները**

1. Քննիչ հանձնաժողով հրավիրված **կամ քննիչ հանձնաժողովի հարցման ենթարկված** իրավասու պաշտոնատար անձինք և հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկությունների տիրապետող նախկին իրավասու պաշտոնատար անձինք իրավունք ունեն՝

1) ծանոթանալու իրենց մասնակցությամբ տեղի ունեցած հանձնաժողովի նիստերի արձանագրություններին, ինչպես նաև ներկայացնելու դրանցում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու առաջարկ.

2) հանձնաժողովի ուսումնասիրությանը ներկայացնելու հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ նյութեր (փաստաթղթեր).

3) պարզաբանումներ տալու հանձնաժողովի զեկույցի վերաբերյալ, ինչպես նաև հիմնավորելու իրենց դիրքորոշումներն ամբողջությամբ:

2. Քննիչ հանձնաժողով հրավիրված **կամ քննիչ հանձնաժողովի հարցման ենթարկված** իրավասու պաշտոնատար անձինք և հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկությունների տիրապետող նախկին իրավասու պաշտոնատար անձինք պարտավոր են՝

1) քննիչ հանձնաժողովի հրավերով ներկայանալ հանձնաժողովի համապատասխան նիստին և այդ նիստի ընթացքում հանձնաժողովի ներկայացրած պահանջով հանձնաժողովին տրամադրել վերջինիս իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկություններ (պատասխանել հանձնաժողովի անդամների հարցերին), եթե դրանց տրամադրումն օրենքով արգելված չէ.

2) հանձնաժողովի նիստերից դուրս հանձնաժողովի ներկայացրած առանձին գրավոր դիմումով (պահանջով) հանձնաժողովին տրամադրել վերջինիս իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկություններ (պատասխանել

հանձնաժողովի անդամների հարցերին), եթե դրանց տրամադրումն օրենքով արգելված չէ.

3) հանձնաժողովին գրավոր կամ բանավոր տեղեկացնել հանձնաժողովի համապատասխան նիստին չներկայանալու կամ հանձնաժողովին՝ վերջինիս իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկություններ չտրամադրելու (հանձնաժողովի անդամների հարցերին չպատասխանելու) հարգելի պատճառների (անհնարինության) ու դրանց հիմնավորումների մասին:

3. Իրավասու պաշտոնատար անձինք և հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկությունների տիրապետող նախկին իրավասու պաշտոնատար անձինք հանձնաժողովի համապատասխան նիստին հրավիրվում են ծանուցագրով: Հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկությունների տիրապետող նախկին իրավասու պաշտոնատար անձին ծանուցագիրը հանձնվում է պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ ոստիկանության միջոցով: Ծանուցագիրը պարունակում է նշումներ՝ հանձնաժողովի համապատասխան նիստին ներկայանալու օրվա, ժամի և վայրի, հանձնաժողովի նիստին հրավիրվող անձի՝ սույն օրենքով սահմանված իրավունքների և պարտականությունների, ինչպես նաև հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկություններ տրամադրելու (հանձնաժողովի անդամների հարցերին պատասխանելու) համար երկու անգամ անհարգելի պատճառով հանձնաժողովի համապատասխան նիստերին չներկայանալու կամ հանձնաժողովի երկու տարբեր նիստերի ընթացքում հանձնաժողովի ներկայացրած պահանջներով կամ հանձնաժողովի նիստերից դուրս հանձնաժողովի ներկայացրած երկու առանձին գրավոր դիմումներով (պահանջներով) հանձնաժողովին՝ վերջինիս իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկություններ տրամադրելուց (հանձնաժողովի անդամների հարցերին պատասխանելուց) ապօրինի հրաժարվելու համար օրենքով սահմանված քրեական պատասխանատվության մասին: Ծանուցագիրը պետք է պարունակի քննիչ հանձնաժողովի հեռախոսահամարները և էլեկտրոնային փոստի հասցեն: